Գեղարքի վանքի կամ Այրիվանքի՝ ճարտարապետական Հռչակավոր Համայնքը՝ բաղկացած ծառայողների և վերջնորդ եղանի Հուշարձաններից, Ա. Էմիլյանի Մայր Աթոռի Հոգաբարձության առարկան էր դարձնել տակավորի Գեորգ Զ կաթողիկոսի գահակալության օրերին, սակայն վանքի վերաշինության ու բարեկարգման ուղղությամբ այնպես լուրջ աշխատանքներ ձեռնարկվեցին ավելի ուշ՝ Վազգեն Ա կաթողիկոսի օրոք՝ սկսած 1958-ից և շարունակվեցին տարիներ: 1958 թվականին վանքի արևելյան կողմում կառուցվել է աղբյուր, 1960-ին վերակառուցվել է դպրոցար, 1968-ին Համայնքի արևմտյան Հատվածում կառուցվել է վանատան երկհարկանի շենքը և բարեկարգվել վանքի տարածքը: 1978-ին բացվել է վերանաուցչած սեղանատանը, վերանորոգվել են պարսպին կից շինությունները, Կաթողիկոսի խորանում տեղադրվել է նոր բնօժանդ: 1987 թ. ավարտվել է Կաթողիկոսի ու զավթի տանիքների՝ թաղական բարեկամ սպարտեմբ: Ընդհանուր առմամբ Գեղարքավանքի շինարարական և վերանորոգչական աշխատանքները ավարտվեցին 1987-ին:

Արտադանի Ա. Հովհաննիս եկեղեցին վաղ միջնադարի Հայ ճարտարապետության ուշագրավ կոթողներից է: Ճարտարապետական առանձնահատկությունների ուշադիր ուսումնասիրության միջոցով կառուցման ժամանակը Համարում է 7-րդ դարի 80-90-ական թվականները: Հոբոտի-ճանաչող այս հուշարձանի արժեքները մինչ այժև, որ պատկանելով նույն դարաշրջանին՝ մեզ է հասել ավելի բարձր գիճակում: Սրբավանդ Ա. Հովհաննիս եկեղեցու վերանորոգման ծախսերը Հոգաց ԱՄԿ-ի Արևելյան թև:

¹ Դարությունյան Վ., Եկայ Շինարար, էջ 82:

² Գիճվել է Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարի սկզբին ներստանալով սրբավայրի տերուր՝ «անցի հաճառ նախապես օգտագործել նա թեևսակ բարադոնելը Այստեղից էլ մեծաստամբ առաջին՝ Այրիվանքի ամուրը: Մանրանուն տես **Ամուրի** 4., Այրիվանքի վան Գեղարքի վանք, Վարչաշառատ, 1871, **Միսիսյան** Մ., Առողջապահության նախարար Սմիթ Ռուտլիդ Այրի վանքը սրբոյն Գեղարքու Վարչաշառատ, 1873, **Իսկուպիան** Յ., Խաղաղմանը կամ Դոնդարը հայոց պատմության մեջ, մաս 1, Վարչաշառատ, 1928, մաս 2, Երևանում, 1944, մաս 3, 1969:

մը: Աշխատանքների սկզբները 1961-ի երկրորդ կեսին և ավարտվեցին Հաջորդ արարված սեպտեմբերին»:

1694 թ. Նահապետ Եղևնացի՝ կաթողիկոսի օրոք և Շոտթեցի Աղամալ իշխանի միջնոցներով Էմիլյանում վերակառուցվել է Ա. Շողակաթ եկեղեցին, որը բացառիկ արժեք է վաղ միջնադարում ստեղծված ու գերբնավոր դասիկն կրճիղ եկեղեցիների տեսակի ուշ միջնադարյան եկեղեցիների մեջ: Շուրջ 300 տարվա ընթացքում եկեղեցին թեև հնթարկվել է մասնակի նորոգումների, սակայն չհիմնականում պահպանվել է անաղարտ վիճակում: Այնուհանդերձ Վազգեն Ա-ի օրոք նրա առանձին մասեր կարելի են երևան հանված, իսկ վանքի շրջապատը՝ բարեկարգման ու ցանկապատման: Այդ բոլոր անհրաժեշտ աշխատանքները կատարվեցին 1960-ական թվականներին զինախառի Հանձնարարական ու ամբիջական Հոգաբարձությամբ:

Հաջորդ եկեղեցին, որը նորոգվեց ու բարեկարգվեց, Երևանի Զորավոր Ա. Աստվածածինն է՝ Կ. Ջորաբեր Երևանու ուշ միջնադարյան շրջանի եկեղեցիներից է՝ կառուցված հին եկեղեցու տեղում: XVII դ. պատմիչ Առաքիլ Դավիթբեցին այս եկեղեցու մասին վկայել է. «Վազնի ժամանակներից սուրբ առաքյալ Անանիայի զորավարների կողմից մայրիուց մատուց կառնված, որ Երևան բազարի Հյուսիսային կողմում պարիսիերի մեջ էր»:¹ Ինքզատանելով Ամիրզոլուս խանի առաջարկին և Երևանի բնակիչների

¹ Դայաստանյայց առաքելական եկեղեցու Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջևան թեմը կառուցվել է 1927 թ. Սննանց հայոց կաթողիկոս Անոց և Սուրենյանցի հայրապետական կոնգրեգուցի, Առաքելոսիստոց՝ Լյու. Ջորոքի Ա. Աղարան եկեղեցու: Մինչ այդ ԱՄՆ-ի այս համայնքը միակրթված էր ընկ մեծ մեջ՝ ստեղծված 1898 թ. Սննանց հայոց կաթողիկոս Ստրոլոյ Ա. Վանբոյ Լուկալովի: Սննանց հայոց կաթողիկոս Անոց և Սուրենյանցի կոնգրեգուցի ԱՄՆ-ի արևմտյան ճանաչանքները ընդգրկել են Սոթ՝ Արևմտյան թեմը, իսկ արևելյան, հարավային, հարավարևմտյան և վերնորոգված նահանգները՝ Օնտարի Միջանց թեմի իրավաստանքները: Ամբուրան տես **Ավալյան** Յ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, է. 2000, The Torch was Passed, The centennial History of the American Church of America, N. Y., 1998:

² Տես **Դարությունյան Վ.**, Եկայ Շինարար, էջ 95:

³ Նահապետ Ա Եղևնացի, Ոստիանցի Սննանց հայոց կաթողիկոս էր 1691-ից մինչև 1705-ը և անդիմված է Ա. Շողակաթ եկեղեցու բալուն: Լա հաղորդել է Երիզավր Աբգարյանը: Երել է Երևանի Ե-անկաթու, կաթողիկոսի խորհրդանշան ու գործակից: Կաթողիկոս է օժեյլ: Սայր Աթոս Ա. Երմիսյանի միասնական ընդունույթան: Կաթ. գործունեության սկիզբը նշանակողվել է շինարարական աշխատանքներով: Մանրանուն տես **Մանուկյան** Մ., Պատմություն հայոց, Խ. 3, «Նեոսիլի, 1786, **Միսնոյ կաթողիկոս**, Ձարու, Վարչաշառատ, 1873, **Օրնանյան** Մ., Ազգայնատու, Խ. 2, ԿԳ, 1914:

⁴ Ըստ ավանդության՝ Դեղիսիմյանց կոյսուղից և Արիանիի նախադասության վաղուց Գրիգոր Լուսավորիչը կատարել է եկեղեցին: 7-րդ դարում այս տեղում կառուցվել է եկեղեցի, որի ամուրը՝ Շողակաթ, կապվում է ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հետ և նշանակում է «Լույսը լող կանթե»:⁵ Կիլիկեցու հարավային ավանդատանը գտնվում է Ա. Սարիանի տապալանաբաղ՝ «Սուրբ Շողակաթ» ժամապատմությամբ:

⁵ Երևան Ա. Սննանցի առաքյալ անապա. Ջորավոր Ա. Աստվածածին եկեղեցին կառուցվել է իմն Երևանի Նախարարապետական իրավաստի կողմից պահպանում:

⁶ **Կալիկոսեցի** Ա., Պատմություն, Եր., «Սովետական գրողի հրատ», 1988, էջ 233:

խղճարանին՝ Մովսես Տաթևացի վարդապետը (Հետագայում՝ Մովսես Գ - Տաթևացի կաթողիկոս) Անանիայի ժառանգի պաշտպան տեղում կառուցում է եկեղեցի, մասնաձև, միաբանական խցեր և այլ շինքեր, Հիմնում մի բարգաժան վանք, որի Համբավը տարածվում է երկրի սահմաններից դուրս: Սակայն Մովսես Տաթևացու Հիմնարար վանքը անական կյանք չուձեցավ: Հիմնականում փայտաշեն կառուցվածքները Հրո ճարտի գոհ դարձան 1635-1636 թվականների թուրք-պարսկական կողմերի մասնակի: Տեպկան կյանք չուձեցավ նաև Փիլիպոս կաթողիկոսի օրսք վերաշինված վանքը, որն ավերվեց Երևանի 1679-ի երկրաշարժից: Մինչև մեր ժամանակները պահպանված եկեղեցին ավերված վանքի տեղում կառուցվել է 1693-ին՝ խոյա Փանոսի միջոցով: Լախապու այն կոչվել է Ս. Աստվածածինն ու Հետագայում վերանվանվել Ա. Ջորավոր: 1974 թվականից Վեհափառ Հանձնարարությունը սկզբից նաև Ա. Ջորավոր եկեղեցու վերանորոգչական աշխատանքներ: Այդ նորոգչական կատարվելից Մայր Աթոռ Սուրբ Երզրայի Պատրիարքոսի (Փարիզ) նվիրատուության և ամբարձրչին 1978-ին:

ՀՀ կուսակցի մարզի Բլնի գյուղը Հարուտ է եկեղեցական պատմա-ճարտարապետական հուշարձաններով, որոնց պահին է գյուղի Հյուսիսարևմտյան բարձրադիր լանջին կառուցված Ս. Աստվածածին վանական Համալիրը: Գարեկներով շրջապատված բակի կենտրոնում գտնվող զեղարանի Հորինվածքով վեհաուսք եկեղեցին կառուցվել է 1031 թվականին Գրիգոր Պաշխավառի (Մաղաթուր) իշխանի կողմից, և Պետրոս Գեաղամար կաթողիկոսի ու Լովհաննես Սմբատ թագավորի Հրամանով այստեղ Հաստատվել է եպիսկոպոսական աթոռ: Ինն Ա. Աստվածածինը դարերի ընթացքում ենթարկվել է վերանորոգումների, և 1950-ական թվականներին էլ ընդհանուր առմամբ լավ էր պահպանված, այնուամենայնիվ 1956-1957 թթ Վազգեն Ա Հոգևորաբարձարի և Շրամանով Լբանուս Հակոբյանի միջոցներով իրականացվելին նախատեսված աշխատանքները՝:

Ս. Գրիգոր Լուսավորչի անվան Տեո է կառուցվում Սուր Վերալի վանքը՝ որը կառուցվել է Արաշառի երբեմնի միջնաբերդի տեղում: Խոր Վերալի վանքը վերաշինված ու երկին պայծառացած տեսները Հանդիսացավ նո-

բընաիր Վազգեն Ա կաթողիկոսի սրտի բազմանքը և ի սկզբանէ տեղ գրառվեց նրա շինարարական ծրարգրերում: Վերանորոգման ծրարգրը ներառում էր երեք Հիմնական բաժիններ, որոնք վերաբերում էին՝ առաջինը՝ գլխավոր եկեղեցուն, երկրորդը՝ Վերալի վրա Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն և երրորդը՝ պարսպուկների ու զանազան շենքերի վերաշինությանն ու ընդհանուր բարեկարգմանը: 1959 թվականից մինչև 1980-ականները մի քանի փուլով վերակառուցվին և բարեկարգվին ամբողջ վանական կառույցը՝ Հարակից տարածքներով: Տեսական միջոցառումների շնորհիվ Հայ Առաքելապետ եկեղեցու Համաժող կենտրոններից մեկը՝ Խոր Վերալի վանքը, վերապատ իր մաղանի շուրջ, գարավաճ էլ ավելի բարեկեն, բարեուստ ու բարեկարգ: Գրանով ին իրականացավ Վեհափառ Հայրապետի բազմանքներից եւ մեկը:

Վազգեն Ա կաթողիկոսի շինարարական ծրարգրերի մասն էլ կազմում նաև Էլմիմանի բազարի Ս. Աստվածածին եկեղեցու վերանորոգումն ու գանգակատան կառուցումը: Եկեղեցու Հիմնական վերանորոգման, գանգակատան և երկցատան կառուցման, շրջապատի ցանկապատման ու բարեկարգման ամբողջ ծախսերը Հոգացին Մայր Աթոռի արքեպիսկոպոս Հայրաբերաներ Վահե և Տորիս Չուգանյաները: Օժման Հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1987 թ. սեպտեմբերի 20-ին:

Մայրավորի տարածքում՝ բակի Հյուսիսարևելյան կողմում, ճարտարապետ Գ. Ջուրաբյանի նախագծով 191-ին կառուցված մասնաշաղարանի շենքի օգտագործվել է որպես Հոգևոր ճեմարան: Ճարտարապետ Ա. Գալիկյանի կազմած նախագիծի Հիման վրա որոշվեց, որ շենքի ընդարձակույթը պետի կատարվեր Հյուսիսային կողմից երկու Հարկի Հավիլմամբ և սրբատան կողմից՝ նոր մուտքի Հանդույնի կցակառուցմամբ: Շենքի վերակառուցումն ավարտվեց 1983 թվականին և Հանձնվեց կիրառության:

Երևանի Ա. Լովհաննես Մկրտիչ եկեղեցին մեկն էլ բազաբի եկեղեցիներից, որոնք ավերվեցին 1679-ի անլը երկրաշարժից: Հետագայում՝ 1730-ին, Մեխրի Աղամալ իշխանի կողմից նույն տեղում վերանորոգվեց կառուցվեց Համանուն եկեղեցին: Այն 20-րդ դարի կեսերին ևս կարող էր լուրջ վերանորոգման, որն իրականացվեց Ա. Էլմիմանի Մայր Աթոռի ճարտարապետների Հանձնաժողովի ընդհանուր Հակուրթյամբ, վանքի գլխավոր ճարտ. Ա. Գալիկյանի անմիջական ղեկավարությամբ, Արարատյան թեմի առաջնորդական փոխառող Գաբրիելի կողմ: Ներդրախնի (Հետադարձ) Գաբրիելի Բ Ներսիսյանի ամենորոյս արձույթով Մայր Աթոռի բարեկարգելի Չավեն և Մարի Մեխրիսյանների ղյուրական նվիրատուության (Մկրտչ):

Բացի վերը հիշատակված եկեղեցիներում իրականացված վերաշինության Հիմնական աշխատանքներից՝ մասնակի վերաշինության և բարե-

¹ Տե՛ս Եղիազարյան Հ. Բրնի վանքը և Բրնի գյուղի մյուս հուշարձանները, «ԵՊՃՈՒԹԻՑ», 1963, № 6-ձ, էջ 43-50:
² Տե՛ս Պարոյրյան Վ., Ելաց Ընթացք, էջ 100:
³ Խոր Վրապ վանքի պատմությունը սերտորեն անցվում է Հայոց դարձի, քրիստոնեական Հայաստան կրոնական, արվեստն ու մշակութային գաղափարայն գաղափարայն արևոց ընթացքի մեկ (Աստվածան տե՛ս Մարտիկյան Ա., Խոր Վրապի վանքը և նրա զոլոբայն կենտրոնը, «ԷՔՊՄՈՒԹԻՑ», 1997, № 2-3, Հայասրայան Ս. Հայոց դարձի ճախակալիցը, Խոր Վրապի վանքը, Հայոց պրեզնի և սրբավայրերը (ժող.), Ե., 2001.

գարգանս աշխատանքներ կատարվեցին նաև այլ եկեղեցիներում, գլխավորապես՝ քննական: Մասնավորաբար այդ վերահսկողված եկեղեցիներն էն՝ Մարտին եկեղեցին Աշտարակում (1976-1977), Մրգավանի ու Հակոբ եկեղեցին (1984-1987), Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցին (1987), Գյույսբու Յոթ Վերք կամ Ս. Աստվածածին եկեղեցին (1986-1987), Սուս-Փանավանի եկեղեցին, Էջաղվանի ու Աստվածածին եկեղեցին (1981-1986) և Արշալույս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին:

Վազգեն Ա. Հայրապետի շինարարական-վերանորոգչական գործունեության մեջ կարևոր տեղ է հասնալովել նաև վերահսկող և այլ թեմերի մի շարք եկեղեցիների վերանորոգմանն ու բարեփոխմանը: Այդ եկեղեցիներն են՝ Ախալցխայի Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ախալցախայի Ս. Խաչ, Թրիդիսի Ս. Էջմիածինն ու Ս. Գեորգը, Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչը, Կիրավաղի Ս. Գրիգոր Լուսավորիչը, Թուսասանի Կրստոսի մարտի Ս. Վերափոխությունը, Վաղրիսավաղի Հայկական եկեղեցին և Մոսկովյան Վազանկոյան զերեզմանատան մոտ գտնվող Հայ համայնաշրջանի երեք մասյոց եկեղեցին:

Վազգեն Ա կաթողիկոսի զահակություն տարիներին Սփյուռքում եռ նոր թափ ստացավ Հայկական նոր եկեղեցիների շինության գործը: Վեհափառ Հայրապետի սրտի շերտ փափազն էր, որ նոր կառուցվելիք աղքետի անընդ լինեն մեր եկեղեցական դասական ճարտարապետության ավանդույթներին և օճին համապատասխան շինություններ: Այդ ուղղությամբ նորին Սրբությունն ուղղորդում ու արժեքավոր խորհուրդներ էր տալիս Սփյուռքի թեմակալ առաջնորդներին և թեմական կազմակերպություններին:

Մայր Աթոռում ստացվում էին պաշտոնական բազմաթիվ նամակներ ու գրություններ, որոնցում խնդրանք էր ներկայացվում Հայոց Հայրապետին և Մայր Աթոռին առերթն ճարտարապետների հանձնաժողովին՝ օգնելու նոր եկեղեցիների շինության հարցով: Կազմակերպվեցին կամ իրենց կազմում նախագծերը վերանայելուն և մասնագիտական կարծիք հայտնելուն: Ստորև կներկայացնենք համառոտ տեղեկություններ Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի կողմից քննության առնված այդ նախագծերի մասին:

Առաջին նախագիծը, որ մշակվել է Միլանի Հայոց Ս. Բառասուն Մանկանց եկեղեցու շինությունն էր: Այդ եկեղեցին կառուցվել է աղքետախնայ Հայ Հովհաննես և Սուրբյա Տիարբերքիչուն եղբայրների նվիրատուությամբ: Հաջորդը Մոսկովիցի (Ռուսովյան) Հայ եկեղեցու կառուցման նախագիծն էր: Երբ 1960 թ. Վեհափառ Հայրապետն այցելել էր Հարավային Ամերիկա, Մոսկովիցիի Հայերը խնդրել էին քննության առնել և կարծիք

Հայտնի տեղում Հայ եկեղեցի կառուցելու ծրագրին: Վեհափառ նախագիծն իր հետ բերել էր Մայր Աթոռ, և 1960-ի հոկտեմբերի 13-ին նրա նախազեռությամբ գլխավորապես ճարտարապետների հանձնաժողովը, քննության առնելով նախագիծը, անհրաժեշտ համարեց այն մասնակի վերամշակման ենթարկել՝ Հայկական եկեղեցական ավանդույթներին համապատասխան: Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդարանը որոշել էր նյու Յորքի կենտրոնում ձևեր բերված հոգաձայնի վրա կառուցել գառնաձև ճարտարապետությամբ հայասն մի եկեղեցի: Եկեղեցու նախագիծը Հայրենի ճարտարապետների միջոցով մշակելու մասին թեմի ցանկանալուն ընդառաջել էր Վեհափառ Հայրապետը, և 1965-ի ապրիլի 28-ին նրա կողմից էլ կատարվեց օժման հանդիսավոր արարողությունը: Ստամբուլի Հայկական Համայնքն էլ ցանկանալով ունենալ Հայասն մի եկեղեցի՝ եկեղեցու կառուցման մի նախագիծ ուղարկեց Մայր թոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետին, որպիսիք Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովն այն քննության առնել ու հարավոր բարեփոխմաների իր առաջնորդներն անի: Նախագիծը բարեփոխման ենթարկվելուց հետո ուղարկվեց Ստամբուլ: Կամ՝ Ալեքնայի եկեղեցական Համայնքը նպատակադրել էր Ավստրիայի մայրաքաղաքում կառուցել մի եկեղեցի՝ զրա համար օգտագործելով լոնդոնահայ Լուիսիոնի Հալաձյանի նվիրատուությունը: Երևան-բարություն ավարտելուց հետո եկեղեցու հանդիսավոր օծումը՝ ձևաձևը Աննանի Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի ու մասնակցությամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ս. Շոթրճ Գալուստյանի, տեղի ունեցավ 1968 թ. ապրիլի 21-ին:

Աննայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի շինարարական գործունեության մեջ կարևոր տեղ զբաղեց նաև նոր շինքերի կառուցումը թե՛ Մայր Աթոռում և թե՛ նրա շրջապատից զուրս: Ստորև հատկապես կանդաղառանք զանական և մշակութային շինքերի ու ճարտարապետական այլևս կաթողիկոսի շինարարությունը: Իրանց շարքում են Գեղարզավանքի զանապետը, միլանեցիական ու հոգևոր հեծարների սաների անտոյանի հանգուսի Համար նախատեսված «Հայկաչին» անտոստեղը, Ս. Գալանի զանքի մատաղառուը, Մայր Աթոռի նոր զանապետը, Ալեք և Մարի Մանուկյան զանապետը, Երևանի Հայրապետական Հյուրանոցը, մի շարք երկցասաներ, Ս. Էջմիածին, Ս. Գալան և Շոթախաթ զանքերի քակիրտ գաղամական հիշատակներ խորհրդանշող աղբյուրներ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի շենքը և այլ շինություններ:

¹ Տե՛ս «Քրիստոսյան Հայաստան» ամսագիտական, էր. 2002, էջ 46:

² Անճախան տես Հարությունյան Վ. Ելալաք Շինարար, էջ 127-150:

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի եկեղեցուցն ու ազգանվիր բազմաբեղուն գործունեությունը նրա գահակալության ընթացքում արժանանում էր անհամար շնորհակցանակների և բարձրագույն կոչումների արժանացմանը։ Տ. Տ. Վազգեն Ա-ն ավելի բան երբեք տասնամյակների ընթացքում անդուլ ջանքեր գործադրեց, որպեսզի վերստին կանգուն դառնան, պայծառանան ու բարեգործվեն «Ինչ որ անցելի մէջ չոր մեռաբեր քանդակցին դարեր եւ դարեր շարունակ», վստքալին Համալիրինը լրանան նորահասույցներով, քանդարանները Հարստանան զեղազրկեցան քարճարվեստ նորանոր գործերով, որպեսզի Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր շուք ու փայլով դառնար Հայասնի Հայտնության նվիրական ուսուցալարը՝ զեպի իրեն ձգելով Հայրենիքի ու Ափյուռքի Հավատացյալների ու Հյուրերի հոծ բազմություն։

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՏՅՈՒ ԽՆԴԿԱԿԱՌԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՋՉԵՆ ԵՎ ՎԵՃԿԱԿԱՌԱԹՅԱՆ ԵՐՁՆԵՆՈՒՄ

ԼԻՒԹ ԳՈՐԾՅԱԼ

Ամենայն Հայոց կաթողիկոսի արդյունավոր գործունեության էջերից մեկն էլ Համաշխարհային խաղաղության դառնի բերած մեծ նպաստն է։

Սկսած 4-րդ դարի սկզբից՝ Հայաստանում քրիստոնեության պետականացման առաջին խնդիրը, դարեր շարունակ Հայ ժողովուրդն ու Հայաստանյայց եկեղեցին ընթացել են նույն ճանապարհով՝ իրքե մեկ ընդհանուր մարմին։ Ժամանակից բաժին Հասած ցավ կամ ուրախություն միշտ կհսկե են իրար հետ եւ, իրքե անդամաճան գինասկզցներ, միասնաբար պայքարել են իրենց խաղաղությանն ու ազատությանն սպառնացող թշնամու դեմ։ Հայ ժողովրդի Համար յուրահատուկ է եղել խաղաղության բովանդակությունն իր կյանքի պատմության պես։ Գարեր շարունակ մեր երկիրն այնքան է զուրկ մնացել խաղաղությունից, որ «խաղաղություն» բնորոշումը մեր լեզվամտածողության մեջ ամենից առաջ միահյուսվել է «ազատություն ե պայքար» հասկացություններին։ Ազատության իր ձգտումն իրագործելու Համար մեր ժողովուրդը մշտապես Համառ պայքար է մղել, իսկ խաղաղությունը եղել է նրա պայքարի նպատակը, նրա ազատության ոգին։

Ենիարար ու Հայրենասեր կաթողիկոս Վազգեն Ա, Հավատարիմ լինելով Հայ եկեղեցու խաղաղասիրական գործունեությանը, առաջնորդվեց մայր Հայրենիքի եւ Հայոց գերազույն շահերով ե իր արդասարեք աշխատանքներն ու ազդու ծայր բարձրացրեց ի նպաստ խաղաղության քարտեզաշրջանին ի սփյուռս աշխարհի։ Դեռևս վաղ շրջանի ստեղծագործություններում, հողամաններում, պեկուցումներում ե քարոզչներում նա տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է խաղաղությանը ե ապացուցել, որ պատերազմների առկայությանը Հասարական որոշ խավերի բարոյական սնանկության հետևանք է, ուստի մարդկությանը կայուն ե առևական խաղաղության պարզեկելու ամենակարևոր ու առաջին պայմանը նոր սերնդի հոգում քրիստոնեության բարոյական բարձր նկարագրի կերտումն է, որից ե կախված է աշխարհի Համայն մարդկության գալիքը։

Բարեկամության ե խաղաղության գաղափարն ի սկզբանե մոտ ու հարգապա է եղել մարդու հոգուն, սակայն քրիստոնեական վարդապետությանը հիմնված է սերո ե խաղաղության վեհ սկզբունքների վրա, մարդկային հոգում առավել ես խորացնում է այդ զգացումը ե մատնա-

նշում, որ պատերազմները, սպգամտույթյունը, ստեղծությունը միշտ և ամենուրեք չարիք են սերմանում: Մյուսն խաղաղության, սիրո, փոխադարձ հասկացողության պայմաններում է մտրդը կառուցում, ստեղծագործում, իմաստավորում իր գոյությունը և դառնում առաջիկ երջանիկ, հետևաբար, ինչպես ասում էր վեհափառը՝ «Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք ըլլալ և վիճել, խաղաղությունը սակայն վեր պետք է ըլլալ ամեն վեճն և բոլորիկ Համար մասնին ու գործելու գերազույց կանոն»՝ ամեն անասիկ հասցերը լուծելու:՝ Նա խաղաղությունը ամեն բանից առաջ Համարում է բրեստանկական, այն Հիսուսի կյանքի և մտածողության հիմքն է կազմում: Տերը խաղաղություն է բաշխել մարդկանց, ժողովուրդներին, որպեսզի մարդիկ ձեռքազատվեն անասական կրքերից, ներքին հոսի հոսիներից, լինեն բարի, առաքինի և սերեն միմյանց: Քրիստոսը պատվիրել է նույնիսկ սերել թշնամուն, ուստի՝ «Ոչ ք բարությունը, սիրո և խաղաղության զգացումը այս բարձունքին չէ Հասցուցանք»¹: Թնականաբար Հիսուսն այդ վեհ գաղափարախոսության շատագուցանքը նախ և առաջ պետք է լինեն Հոգևորականները, որոնք լրջությամբ ու անշառունջությամբ պետք է թափանցեն երևույթների խորքը, ուսումնասիրեն և վերլուծեն մարդկային աշխարհի կառուցվածքը, նրա գաղափարական հիմքերն ու մտածացույց անկե պատերազմի զրոպատանաները և սովորչեցնեն ընդհանուր գիտաթափման ճանապարհը:

Քրիստոնյա մարդու, առաջիկ ևս կղերականի ու Հոգևոր պետի անձնավիրական, կարևորագույն առաքելությունը վեհափառը Համարում է խաղաղության գաղափարի տարածումը մարդկության մեջ, այն էլ «Հյուսիսական» այս դարում: Ըստ վեհափառի՝ Աստուծու Ազիտաբանը զրգամ է Հնեց մեր ժամանակների Համար՝ մինչև զե՝ «Ամեն պատերազմ մտածում է Քրիստոսի ու Անոր սուրբ Ազիտաբանի... Արգ, բոլոր կնիկեցիները և բոլոր կրոնները կարող են և պարտն մեկտեղվել, եղբայրանալ և միասնաբար բարոյել ու գործել Հանուն աշխարհի խաղաղության, Հանուն ժողովուրդներու բարեկամության, Հանուն պիտույթյուններու Համերաշխ գործակցության»²:

1948-1950-ական թվականներին Ներդրույով նորից չըլում էր պատերազմի ահարկու ու բովականը: Բուզաբականությունը Հզի էր պատերազմական ահել սարսափներով, ինչը մահվան չափ ստեղծ էր պատերազմից նոր դուրս եկած, տակավին իրենց վերքերը չսուրիացած Ներթալյի ժողովուրդը:

¹ ՄահակաՆ Ա., Ամենայն Դայոց Կարդիղոս Տ.Տ. Վազգեն Առաջին (Կյանքն ու գործունեությունը), Երևան «Ղայաստան», 2001, էջ 31:
² Լույս տեղում:
³ «Երթնաօրհեց», 1971, Ա, էջ 4

ների Համար: Ստեղծվում էին խաղաղասիրական կազմակերպություններ, գրաստիզում ժողովուրդներ, որոնք իրենց ներգծում ու դատապարտում էին տեղերական չարիք մեղա Հասարակական-բաղադրական կազմակերպություններին և անհատներին դրամատորական իշխանությունական ու Հակամարդկային գործունեությունը: Աշխարհի բարի մարդկանց ու խաղաղասիրական ուժերի պահանջին իր ձայնն է միացնում նաև դեռևս Ռուսիայում Հայոց թեմի առաջնորդ Խ. Վազգեն վարդապետ Պալեճյանը: Նա Բուխարեստի «Ռեզիդենտ» ուժերի կողմից 1950 թվականի դեկտեմբերի 24-ի Համարում գրում է. «Բարի մարդիկ, բրեստոնյա եղբայրներ, եթե մենք իրական կհավատանք մեր Աստուծուն և զայն կսիրենք անկեղծ սիրով, մեր ամբողջ Հոգով և մեր բոլոր ուժերով, աշխարհանվել նոր պատերազմի մը սպառնալիքին տակ զանվոջ այս մտանցալից օրերուն, բոլորս միասին Համարմովինք ու մեր մտածուններով և գործերով միանանք խաղաղասիր մարդկանց հետ... Իրեն Հնադարյան բրեստոնյա կնիկեցի մը ծառայող Հոգևորական և որպես զավակը ժողովրդի մը, որ իր գրախոս անցյալին մեջ, պատերազմներն և արշավանքներն անխնա Հարգածներով վերապրել կյանքի մը բոլոր գեղունությունները ցմրոր ըմպեց, երբ անս կարելի չէր Հայ մեռլ մեր Հայրենի Հողին վրա, մենք կատենք պատերազմը մեր խոր գիտակցության և կզատապարտենք պատերազմի բոլոր զրգովիները, որոնք իմպերիալիստական շահերու Համար մահացնել կուզեն միլիոնավոր անմեղ մարդիկ»:

1950 թվականի ապրիլի 23-ին Խ. Վազգեն վարդապետ Բուխարեստում տարածում է խաղաղության Հետևյալ կոչը. «...մեր բոլորիկ պարտն է ամուր կերպով փարել մարդասեր և խաղաղասիր մարդկության կայքարբին, որպեսզի նոր պատերազմի մահափոշու աղետն այլևս կրքեք չկարողանա սպառնալ մեր Հայրենիքին և մեր կյանքին»³: Եվ բնավ պատահական չէ, որ Ռուսիայում ծավալում խաղաղասիրական գործունեության Համար 1952 թվականի դեկտեմբերի 7-ին նա դառնում է Ռուսիական ժողովրդական Հանրապետության Խաղաղության պաշտպանության մշտական կոմիտեի անդամ և պարզեցնում «Ռուսիայի առաջ» շրանչանով:

¹ ՄահակաՆ Ա., Ամենայն Դայոց Կարդիղոս Տ.Տ. Վազգեն Առաջին (Կյանքն ու գործունեությունը), էջ 32:
² Լույս տեղում, էջ 33:
³ Տես «Մասնաճակատագրություն», Վազգեն Առաջին Ամենայն Կարդիղոս Ամենայն Դայոց, Այսոյ Արևո Սուրբ Երթնաօրհեց, 1990, ՊԱ Խրատ. Երթնաօրհեց, 146 էջ:

Դառնելով Ամենայն Հայոց Հայրապետ՝ Վազգեն Ա-ն արդեն մալր Հայրենիքից շարունակում է մարդու-ժայր քարոզչի ու ստարանի խաղաղության գաղափարը: Եռսեղ՝ դահապարհային Հենց սկզբից, նրան բնորոշում են խաղաղության համալիրահային խորհրդի անդամ: 1958-ի հուլիսի 15-ին խաղաղության շնքմ պաշտպանն ու մարտիր Ստոկհոլմի Խաղաղության համաշխարհային կոնգրեսի ուղարկում է Հետխյալ Հեռագրը: «Հանուն Հայ եկեղեցին և իր Հավատալուքի ժողովուրդի: մեք ի արև կմաղվենք մեզ իրականոր Հարզուրից»¹ ի միթիարություն և ուրախություն բոլոր ժողովուրդներուն: Մենք եւ, ողջնչված նույն իրականութե, բոլոր եկեղեցիներու կողքին, կոչ կրենք պետություններու մեծարդիկարներուն՝ լալի համայն մարդկության խղճ մայր և սրբու-ժայր պահպանել խաղաղության ատավանաբ պատգամը, արգիլել ամեն տեսակի ստամական զենքերու գործածություն և փրճարկումներ ու աշխարհի վրա զերջնականապես Հաստատել զիճեկի Հարցերը փոխարքը Հակապարտաբար ու արդարութեամբ յուճելու փրկարար կանոնը»:

1959 թ. մայիսի 6-ին Երևանում՝ Միութենաների տան դահլիճում, կայանում է Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում է նաև վեհաժողը: Եռսյն թվականի մայիսի 24-ին Խաղաղության պաշտպանության Խորհրդային կոմիտեի հրավերով վեհաժողում ուղարկվում է Մաովկա՝ մասնակցելու կոմիտեի ընդլայնված նիստին: Երկու օր Հետո նա Հայրապետական կույթով Հանդես է գալիս Մոսկվայում և հունիսի 3-ին վերադառնում է Մալր Միութն: Վազգեն Ա-ի զեկույցի զիխավոր միաբը Հետխյան էր. «Հայ եկեղեցին թե՛ մեր Հայրենիքում, թե՛ արտասահմանում խաղաղություն պիտի քարոզի և խաղաղության համար պիտի պրքած»: 1961-ի հունիսի 13-18 Պրահայում գումարվում է Խաղաղության պաշտպանության համաքրտունեական համաշխարհային I-ին կոնգրեսը, որին մասնակցում է նաև Հայաստանյայց ստաբիլական եկեղեցին: Այդ համապումարում Հայ եկեղեցու պատգամաբարություն անձամբ զիխավորում է վեհաժող Հայրապետը, որն ընտրվում է կոնգրեսի նախահանգության կազմում: Ես կոնգրեսում հանդես է գալիս ողջույնի շնքմ խոսքով ու «Խաղաղություն և քրիստոնեական արարություն» թեմաով իր կուս և իմաստալից զեկույցում»:

1962 թ. մայիսի 12-ին Երևանում տեղի է ունենում խաղաղության կոնգրեսիկներին հանրապետական կոնֆերանսը: Այստեղ ընթերցվում է Հայոց Հայրապետի՝ խաղաղությանը նվիրված ճառը: Եռսյն թվականի

հուլիսի 9-14-ը Մոսկվայում՝ կրեմլի Համապումարների պալատում, գումարվում է ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում են 121 երկրների պիլի թան 2400 պատգամաբորներ, բազմաթիվ զիտորդներ, հյուրեր, այդ թվում՝ բազաբական, հասարակական գործիչներ, հողեորականներ և գիտնականներ: Այդ կոնգրեսին իր մասնակցությունն է ունենում նաև Վազգեն Ա Հայրապետը: Ես համաշխարհային վեհաժողովի ամբողջից ունեցած իր կույթով փաստորեն դաճում է արտահայտիչը բազմադարյան Հայ եկեղեցու խաղաղատենչ ձգտումների ու իղձերի. «Հանուն Հայաստանյայց եկեղեցու, Հայ ժողովուրդի քրիստոնեական հավատի հաղար և վեչ Հայրաբամայ կենտրոն: Էջիմաճից Մենք ողջունք և օրհնաթյուն ենք բերում Համաշխարհային այս մեծ համապումարին, որտեղ խաղաղության մայրը, մարդկային խղճի մայրը հնչում է ուժգին, աշխարհի բոլոր լեզուներով: Ուրեմն ամեն զեով խաղաղություն, անդ տեղ խաղաղություն, բոլորի համար խաղաղություն՝ արդարության և ազատ ինքնորոշման սկզբունքով»:² Մոսկվայի՝ խաղաղության համար հրավիրված վեհաժողովը նոր թխման հանդիսացավ ժողովուրդների աշխիվ, նվիրական պաշարի մահապարհին՝ հանուն եղբայրության, սիրո և միջազգային խաղաղության:

1962 թ. հոկտեմբերին Ս. Էջիմաճունում գումարվեց Հայաստանյայց տառերկական եկեղեցու ազգային-եկեղեցական ժողովը, որտեղ միմայն ընդունվեց խաղաղության հետխյալ րտեսակը. «Հայ ժողովուրդը, որն աշխարհում այնքան աճաբոր չափերով ստանալի է իյսերից և ինքնի առապահանգության պայմաններում ու հանաթի ռոքի կոթան է եղել ու եահաստակել պատերազմներն ընթացում, առավել քան որե՛լ այլ ժողովուրդը, կտրիք ուճի խաղաղություն ու ապահով կյանքի: ԱՀայ թե՛ ինչու Հայաստանյայց տառերկական եկեղեցու և Հայ ժողովուրդը երեցց ամենաշնքմ աղոթքն են վերառաբում, որպեսզի երկրի վրա տիրի մայաուն խաղաղություն և ազգերի միջև բարեխամություն: Այսօր, երբ մարդկության երկնապամարի վրա կախվել է աշխարհակարման պատերազմի վտանգը, և համայն մարդկությունը գտնվում է երբեք չունենված աճաբոր սարսափների առաջ, հանուն մեր սուրբ հավատի, հանուն Քրիստոսի Ս. Ավետարանի, հանուն Հայաստանյայց տառերկական եկեղեցու և հանուն մեր ժողովրդի զեկույցուն շահերի, Ս. Էջիմաճին կամարների տակ գումարված ազգային-եկեղեցական ժողովը հաստատրեն իր իղձն է հայտնում, որ մեծ պետություն-

¹ «Էջիմաճին», 1962, մայիս, էջ 11:

² Տես «Մասնակաղաղություն», փազգեն Ասարի կարդիղուս Ամենայն Հայոց, 26 էջ:

³ «Էջիմաճին», 1961, հուլիս, էջ 3:

⁴ «Էջիմաճին», 1962, օգոստոս, էջ 7-8:

ներն օրենքից զուրա հուշահին պատերազմը՝ իրեն մեծագույն ոճեր Աստուծո՛ւն և մարդկության դեմ»¹:

Ինչպես տեսնում ենք, վեհաժողովը ոչ միայն արևելքում էր քարոզում ու միանում խաղաղաբարձական ձեռնարկներին, այլև իր եկեղեցու հոգեւորականներին ու Հավատացյալներին է հուշ անում աղոթք ուղղել առ Աստված՝ պատերազմի արհամարհից մարդկությանը փրկելու համար: Երա՛ւելաբարհի խաղաղասիրական ձեռնարկներին այդքան նվիրյալ մասնակցության արդյունքում այդ միջնադարին Համաժողովների խորհրդատվական որոշ նուսաչըրաններ հու՛մարդեցին Մայր Աթոսում:

Հայոց վեհաժողովը՝ որպես նոր օրերի խաղաղության առաքյալ, իր ճամփորդությանը հանդիպումներին ընթացքում ամենուրեք է միշտ քարոզում է մարդկային կյանքի մասունցից զուրա վանել պատերազմի Հնարավորությունը, որովհետև առասպալին, ջրածնային և այլ ահաւելի զենքերի դրսության պայմաններում Հնարավոր չէ այլևս պատերազմներով լուծել ընդերային, զարգարական կամ ազգային որևէ հարց: Դաբեր ընթացքում մարդու, հոգևոր և մտավոր զատաբարձությունը զարգացել է անհամաչափ փերզով: Իմացական կարողութունն ու Հանճարը թուրք են առել՝ հետազոտելու ու նվաճելու համայն տիեզերքը, միշտու բարոյական տակավին խարխալում է կյանքի տղմտտ արահետներում: «Ելուք ի հայրենական ուժերու անմազերմութիւն»- Ելում է վեհաժողովը,- այսօր երգում թյուն է Արդ. մեծագույն Հարքը կրթի՞լ՝ մարդն ինչպիսի՞ր՝ դաշինք պիտի կնքեի անոնց հետ: Արդյոք նա իր իսկ Հայաստանբան ուժերով պիտի խորտակվի՞, թե՞ պիտի տիրակալն ու օգտագործն զանոնք իր կյանքի խաղաղության ու երջանկության համար: Թ՛վ դաշինք պիտի կնքեի մարդու իմացական Հանճարին հետ, մարդու բարոյական հանճա՛րը, թե՞ նույն մարդու կուր կրքերն ու վարքազ մղությանը: Թ՛վ դաշինք պիտի կնքեի հայրենական ուժերուն հետ, պատերազմը, թե՞ միակերպ այխատակը»²:

Կաթողիկոսական իր գործունեության ամբողջ ընթացքում նա թե՛ խաղաղության համաշխարհային կրթիտեսներին ելույթ ունենալիս, թե՛ բուրյ եկեղեցիներ այցելելու կամ Մայր Աթոսում երանջ ներկայացուցիչներին ընդունելիս իր ճաներն ու քարոզները, առանց բացառության, ա՛մբարտել է խաղաղության կոչով և հորդորել բարոյին՝ միասնական կերպով պայքարելու այն բանի համար, որպեսզի «երկրի վրա ապրող բոլոր մար-

¹ Լույս տեսում, Խուլեռներ-Ույններ, էջ 59:
² Վազգեն Ա Պապական Հայոց զիջը երկրորդ, Կոնճակներ, բարոյներ, ճաներ, ելույթներ, Մայր Աթոս Ա. Էջմիածն, 1968, 99 էջ:

դիկ հասնին այն դիտակցության բարձունքին, թե՛ բոլոր մարդիկ, բոլոր ազգություններն անխորք, կերպարներ են, իրեն Աստուծո՛ւն ժողովուրդը»³:

Քաղաղաբար գործունեության համար ինազգայնության համաշխարհա՛սանին խորհուրդը 1962-ին Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետին պարզատրեց Ժ. Կյուրքիի անվան ոսկի մեղալով:

1963 թ. օգոստոսի 5-ին Մոսկվայում ստորագրվեց «Միջուրբում, տիեզերական տարածության մեջ և Ջրի սակ միջուկային զենքի փորձարկումների արգելման պայմանագիրը»⁴: Պատմական այդ փաստաթուղթին ստորագրեցին ՍՍՍՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիչին, ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասոլը և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր լորդ Հյուսիսը: Պայմանագրի ստորագրմանը ներկա էին նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Ու. Տանը, ՍՍՍՄ Մինիստրների սովետի նախագահ Ե. Ա. Նիկոլաչովը, պետական այլ ղեկավարներ, ինչպես նաև սովետական և արտասահմանյան թղթակիցներ: Պայմանագրին իրականում կարևոր քայլ էր միջնադարյան լարվածությունը թուլացնելու և խաղաղությունը պահպանելու, ամբարպնդելու ուղղությամբ: Միջնադարյան զենքի փորձարկումների արգելման պայմանագրի ստորագրումը հսկայական գոհունակությամբ և խոր բերեքանքով ընդունվեց ամբողջ աշխարհում: Հայաստանայց Առաքելական եկեղեցին ևս Մայր Աթոս Ա. Էջմիածնի գլխավորությամբ ջերմորեն ողջունում է այդ պայմանագրի ստորագրումը: Ըրենեղ խաղաղության պաշտպան ու կրթմանի կաթողիկոսն այդ առթիվը 1963 թ. օգոստոսի 7-ին հետագրել է ուղղակի՝ ՍՍՍՄ Մինիստրների սովետին նախագահ Ե. Նիկոլաչովին, ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդիուն և Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարցիալին՝ կարևորելով ժամանակի աշխարհաբարոյաբանական գործընթացների դրական տեղաշարժը մարդկության բարոյական համար իր եկեղեցու ու հավատացյալների անուշիկ ողջունելով նման ձեռնարկները:

1964 թվականի հունիսի 28-ից մինչև հուլիսի 3-ը Պրահայում զու՛մարվեց ինազգայնության պաշտպանության համաբրիտանոտեական համաշխարհային երկրորդ համաժողովը, որին մասնակցում էին բրիտանոյա աշխարհի և այլ կրոնական զամանորդների ներկայացուցիչներ (ավելի քան 1300 մասնակից)⁵: Այդ կրեզերեսին ևս Հայ Առաքելական եկեղեցին ունեցել է իր մասնակցութունը, որտեղ ընթերցվել է Հայոց Հայրապետի հետևյալ ողջունի խոսքը Տ. Մեսրոպ զարգարական Պապին կողմից. «Հայ եկեղեցու անուշիկ ողջունում ենք Պրահայի համաշխարհային երկրորդ

³ Տ. Տ. Վազգեն Ա Պապականի ընդերորդ ուղերուրույունը, Մայր Աթոս Ա. Էջմիածն, 1971, էջ 24:
⁴ «Միջնադր», 1963, Ի-Շ, էջ 7:
⁵ Լույս տեսում, 1964, Ը-Գ, էջ 23:

Համազունյացի, ուր Հափաբյանը եր, քրիստոնյաներ ամբողջ աշխարհի, մեր վճռական խոսքի ասելու ի պաշտպանություն խաղաղության և ժողովուրդների բարեկամության սրբազան դասի:

Չեր մարդասիրական վեճն այս առաջադրանքի Համար Մենք շնորհափորում ենք մեզ և Հավատում ենք, թե մեր օրերին չկա ավելի աստվածահան գործ, քան ապահովումը ազգերի խաղաղ գոյակցության և դիմաքափումը պետությունների:

Մեր օրերի պայմաններին պատշաճեցնելով Պողոս առաքյալի մատուցած, Մենք պիտի ասենք՝ «Եթե մենք քրիստոնյաներ չլսեին Հաջողիչը պաշտպանել խաղաղությանը զուտը, ապա ինչու պիտի լինի մեր կրոնական Հավատը և ինչու մեր քարոզչությունը»¹: Վեճաբար կարեորել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու պարտադիր մասնակցությունը միջազգային և միջկեղեցական նման կոնգրեսներին:

Ամեն անգամ, երբ Վաղզին Ա Հայրապետին տարերք առիթներով Հնարարություն է բնօժնվել խոսելու խաղաղության մասին, նա իր բոլոր ելույթներում էլ արտահայտել է այն միտքը, թե պատերազմներից անհամեմատ ավելի փոքր և ավելի անվտանգ է մեզ փրկելու ժողովուրդները, գոնե մենք՝ Հայեր, այդ քաջ դիմելու մեր անձնական փորձից: Դարեր շարունակ մեր ժողովուրդին վիճակվել է տեսնել դավ ու դառնություն, կոտորած ու սարսափ, պանդխտություն ու որրություն՝ Հայի նահապետից մինչև Ավարայր: Մեծ եղևնեից Սարգսյանական ու մինչև Երկրորդ աշխարհամարտ: Եվ առ թե ինչու մեր ժողովուրդը ծարավ է խաղաղության և մի առանձին անձեռնկալի մեր արտասանում այդ նվիրական բառը: Մայր Աթոռի պատուհանի վրա՝ «Էջմիածին» ամսագրի 1964-ի օգոստոս-սեպտեմբեր միացյալ Համարում Հրատարակվել է Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի օգոստոս 17 թվափր արքայազան կանգնակ ապրիլյան Մեծ եղևնի 50-ամյակի առթիվ, որպեսզի «յուսակիցս 1965 տարին Հոգևոր մեր եկեղեցին և Համայն մեր ժողովուրդին Համար ազգային սուգի և աղոթքի տարի»²: Հայրապետական կոնցրետը միաժամանակ Հրահանգում է, որ «Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մէջ, ապրիլ 24-ին տեղի կունենան կրոնական յարույթ արարողություններ և Հոգևորական պաշտոններ, աղոթելու Համար մեր բնիքաբար նահատակներու Հոգևոր խաղաղութեան և լուսաւորման Համար»³, որ բոլոր Հայ եկեղեցիներում ղեկավարվեն «մշտապա կանթեղներ» նվիրված Հայ նահատակներու Հիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ մշտապա կանթեղ մը պիտի դեղակուրի քրիստոնէութեան առաջին

ծարձրոս Ս. Ստեփանոսի սեղանի վրեկ, որ և յայտհանտ պիտի մատուցուի յայտուի սուրբ պատարագ ամեն տարի ապրիլ 24-ին»⁴, և բոլոր թմեռում, Հայ ազգութեան, Համայններում Համազգային Հաղափառության և Համերաշխ գործակցության կազմակերպման «Հուշի և Հարգանքի Հանդիսարար Համարչութեան, դասախոսութեաններ, գրական զիարդիտատական նիտուր Հայ և աշխարհի Հասարակութեանց Համար, Վերլուծած աղբիւրյան եղևնի»⁵:

Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետն իր սեպտեմբեր 24 թվափր գրութեամբ դիմել էր նաև քրիստոնեական բույր եկեղեցիների Հոգևոր պետներին, իր թվում՝ Հունի պապ Նորին Արքայապետ Ս. Տ. Պողոս Զ-ին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի պատրիարք Նորին Արքայապետ Ալեքսիսին, Բնեթերքերի Արքեպիսկոպոս Նորին Արքայապետ Մայր Ռեմզիին և եկեղեցիների Համաշխարհային խորհրդի բնօժնուր քարտուղար պատվելի զոդու, Վիսահր ճ'Նուֆուին, որ «մեր եկեղեցու և ժողովուրդի Համար պատմական նշանակության ունեցող մեկ պահին»⁶, այսինքն՝ Հայոց մեծ եղևնի 50-ամյակին՝ 1965 թվականի ապրիլի 24-ին, Համայն քրիստոնյա աշխարհը, «առաջնորդված քրիստոնեական գուրի և արդարության զգացումից», իր մասնակցությունը բերի մեր եկեղեցու և ժողովուրդի մեծ սուգին, «Չեր և Չեր մեծ եկեղեցու աղոթքը միացնելու մեր աղոթքներին»՝ երկու միջուկ նահատակ քրիստոնյա Հայերի Հոգիների խաղաղության Համար»⁷: Պատմական այդ գրութեամբ՝ ուղղված վերահիշյալ եկեղեցիների առաջնորդներին, աղարթում էլ Հետևյալ զգացումով. «Բոլոր մեր բույր եկեղեցիների աղոթքները Համայն Հայ Հավաստյայ ժողովուրդի վշտահար սրտի Համար պիտի Հանդիսանան Հոգևոր խոսքունի միթիթարություն»⁸:

Ապգին Ա Հայրապետին սրբատառ կոնցրետի ոգով և նրա իմաստուն թիչարութեամբ բոլոր թեմերում, եկեղեցական իշխանությունների նախահանուրթեամբ և Հովանափրութեամբ, ազգային Հասարակական կազմակերպությունների, գրական և մշակութային Հիմնարկների ու մատուլի հրատուր մասնակցության կազմակերպի Հորիչանական Հանձնաժողովներին՝ պատշաճորեն և մեր վշտին ու սպին Համապատասխան լրջութեամբ նշելու ապրիլյան Մեծ եղևնի 50-ամյակը: Համայն Հայ Հավաստյայ և Հայրեմոսեր ժողովուրդը պարտադրում էր Համազգային Հանդիսարարութեամբ նշելու Հայ սուսապանքի և Հավարական նահատակության 50-ամյակը: 1915 թվականի ապրիլի 24-ին Արեմայան Հայաստանում խաղաղասեր ու անմեղ Հայ ժողովուրդի արյունը Հոսեց դեռևս նման այն Հոգերի վրա, ուր նա

¹ Լույս տեղում:

² Լույս տեղում, էջ 5:

³ Լույս տեղում:

⁴ Լույս տեղում:

⁵ Լույս տեղում, նույնթեր, էջ 3:

⁶ Լույս տեղում:

Հազարամյակներով ապրել, արնել, ստեղծագործել և ծաղկազրել էր... Բնության Հազար ու մի հրաշալիքներով Հարուստ վաղնջական երկրներ դարձած ավերակները կույտ, վերածվեց Համաատարած գերեզմանի: Հրդեհվող բազուկների, թափված արյան Հեղեղների միջով, անթաղ մնացած բյուրավոր գոհերի, պատմական կործանված Հոյակապ և անկրկնելի հուշարձանների վրայով, ինչ կեղեցիկ էր ու հաճախան, ինչ ստեղծվել էր տասնյակ հայ սերունդների արձանագրված և հանձնարք, այդ յուրյուր վրայով անզուր վաշտազուկներ, մուկուսանդուխտի արևը: «Այդ սև օրերուն եկած էր պահ մը, երբ այս աշխարհի վրայ այլևս անհնար էր հայ բյուրով դրամ է՛ վեհափառ Հայրապետն իր կոնզուլումը՝ ամէն յոյս կորսուած կէտեր և Հայոց պատմութեան գիրքը՝ փառկած և արժան մէջ թողարձու: Արեւսանձանիմով, փեհափառն ափնակցանու է. «Նահատակված էր ամբողջ ժողովուրդ մը, այս՛, սակայն Հայերը չէին մնաւած ի սպաս, վառն գի անոնք գրեւոր էին Հաստով ամուր, թե՛ «Կեանք Քրիստոս է և մեռանել՛ չա՛հ» (Փիլիպ. Ա. 21)»։ «Քայց, ո՛վ անինձանալի խորհուրդ մահուան և կեանքի, և ո՛վ հրաշագործ ոգի Հայոց պատմութեանը դրամ է՛ վեհափառն իր կոնզուլումը՝ ինչպիսի Վարդանանց Հերոսամարտի օրերուն և այնուհետև դարեր շարունակ, մահը յայտնող Հայոց պատմութեան ոգին անզամ մը ևս պատուեց վարագործը անողոք ցանկատարին ու կեանքի կոչել մնացորդացը մեր նահատակուած ազգին: «Իբր թա՛ղ որդուց արիւնքով արիւնքացած Հայ ժողովուրդը, Հազար Հինգ Հարիւր տարիներ յետոյ, Կարմիր Վարդանին մեծ աւետիս նուստ: Կարգարարագով»։

Ինչպիսի արդեն նուէ կեր, այս կոնզուլի խորհուրդան «Ճեհարի տարիներին», ավելի որո՛ւ՛ 1965-ին, Մեծ եղեռնի 50-ամյակի Համաժողովրդական ցատու մի գրեհորման ծրագրին էր հորհրդային Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու թեմերում: Կոնզուլն ավարտվում է Մասիսից Ավետարանի հետևյալ խառքով. «Երանի՛ սպավորացը, զի նոքա մի ի թիմարեցան: Երանի՛ որ քաղցեալ և ծարսի իցին արդարութեան, զի նոքա յաղկացին»։

Նշյալ կոնզուլից հետո Վազգեն Ա-ն իր ջանքերն ուղղեց Սուրբ Էջմիածնում և բազմաթիվ հայ գաղթականներում Մեծ եղեռնի գոհերի հիշատակը հավերժացնելու նպատակով հուշարձանների կառուցմանը: Ինչպիսի նշվում է «Միտն» ամսագրի խմբագրականում, Նորին Ս. Օծուխյան գահակալության տասնամյակը զուգարկելով է՛ մեր Մեծ աղետի՝ ապրիլի 24-ի արշուձառ հիշամյակին. «Այս առթիվով Ամենայն Հայոց Հայրապետը

¹ Լուսն տեղում, Ը-80, էջ 4.
² Լուսն տեղում.
³ Լուսն տեղում, էջ 4.
⁴ Մաքրոսի Ավետարան, Ե. 4-6

հանջելի մտածումն ու փոխել էր ունեցել Ա. Էջմիածնի Տաճարին առընթեր կապելին տալու իրաշարքի կազմուած նահատակաց Յուշարձանը, իբրև բարխուն կոթողը Հայրենի Հողին վրայ և մեր սիրտերուն մէջ, անթառած պահելու մեր բիւրաւոր նահատակներու յիշատակին թախիծը և արեւնի պատգամը... Նորին Ս. Օծուխյան կողմէ Հայրենի Հողին վրայ կառուցուած կոթողը, ի յիշատակ Ապրիլին մեր նահատակներուն, մեր սուրբ պատմող յուշարձան մը չէ, այլ մեր արդար դատին, մեր ազգային վերածնունդի ու խախն Հանգրուտները»։

Փոստորն Վազգեն Ա-ի այս կոնզուլով գրվեց պետականորեն Եղեռնի 50-ամյակը նշելու և Երևանի Միջնաճակարքի բարձունքում հուշակոթող կառուցելու սկիզբը:

Պրահայում 1968 թ. մարտի 31-ից ապրիլի 5-ը հանդիսավոր պայմաններում զուամրվեց Խաղաղության համաբարձատնական երրորդ համադարձը, որին մասնակցում էին 50 տարրեր երկրներից ժամանած ավելի քան 80 քրիստոնյա եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների շուրջ 500 պատգամադրներ, բազմաթիվ հյուրեր ու դիտորդներ: Համադատմանը հրավիրված էր նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցին:

Խաղաղության պաշտամունքում Հայրենասիրական մեծ գործունեության համար 1968 թ. սեպտեմբերի 19-ին ՄԱՀՄ Գեղարգույն սովետը Տ. Ս. Վազգեն Ա կաթողիկոսին պարգևատրում է «Պատվո նշան» շքանշանով: Ինչպիսի նշվում է՛ Խաղաղության համադարձում, «Խաղաղության պաշտամունքից Հայրենասիրական մեծ գործունեության համար և մեծ ջանքեր վաթառնում յախի կապակցությանը հայ եկեղեցու առաջնորդ՝ կաթողիկոս Վազգեն Առաջինի պարգևատրելով «Պատվո նշան» շքանշանով»։ Այդ պարգևատրումը համբուկելու էր կաթողիկոսի հորեկանական տարնիցի հետ, ինչը մեծ չուրով տանվեց եկեղեցու սպասավորների, իշխանության ներկայացուցիչներին և համապատյալ ժողովրդի կողմից՝ նույն թվականին վեհափառը պարգևատրում է՛ նաև Խաղաղության պաշտամունքի խորհրդային կոմիտեի ոսկե մեդալով:

1971 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը դարձյալ Պրահայում տեղ ունեցած Համաբարձատնական խաղաղության չորրորդ կոնֆերանսը: Ինչպիսի նախորդ էրեք կոնֆերանսներում, այստեղ ևս Հայ առաքելական եկեղեցին ուներ իր արժանավոր մասնակիցները՝ ուղարկված Հայոց Հայրապետի կողմից: Այն ժամանակ, երբ քաղաքական տարրեր Հայացրենք

¹ «Միտն», Երևանում, 1965, Երկնքեր-դեկտեմբեր, էջ 393.
² «Էջմիածին», 1968, օգոստոս-սեպտեմբեր, էջ 1.
³ Մակրոսան տե ս Լուսն տեղում, էջ 10, հոկտեմբեր, էջ 8-12.
⁴ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 947.

ուևեցող մարդիկ այս կամ այն կերպ խոչընդոտում էին այդ Համագումարի կայացմանը, Վազգեն Ա Հայրապետն ամեն անգամ պատվիրակություն էր ուղարկում և ամեն կերպ փորձում էր օգուտ բերել այնխարհի խաղաղության գործընթացներին:

1973 թ. մարտի 20-25 օրերին ռուս ուղղափառ եկեղեցու Հրավերով և նախաձեռնությամբ Մոսկվայում անդի ունեցող Խաղաղության պաշտպանության Համաժողովի փնջերոզը նստաշրջանը, իսկ հնդկերթըրը նստաշրջանը տեղի էր ունեցել 1971-ին Բուկհոլմայում (ԳԳՀ): Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ ա. նարեկ վրդ. Շարաբյանը ընթերցեց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ուղերձը՝ ուղղված կործանիչ աշխատանքներին. «Այսօր էլ մեր եկեղեցին սիրով է մասնակցում այս պատկառելի ժողովին և պարտաւ է իր բոլոր ուժերով մնալու և իր աշխատանքի բաժինը կատարելու մեր կողքին, սիրելիսլ կերպովըրը»:

1973 թ. Հոկտեմբերի 25-31-ը Մոսկվայում գումարդեց Խաղաղանք ու մերի Համաժողովայնի Համաժողովը՝ Հանուն միջազգային անվտանգության ու դիմաթիվման, Հանուն ազգային անկախության, Համազորանքության և խաղաղության: Այս Համաժողովին Հրավիրովը էր նաև Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Հայ եկեղեցու պատվիրակությունը գլխավորել է Աննեսյան Հայոց կաթողիկոսը՝ տանելով անձամբ Մայր Աթոն Ա. Էշմիսանի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ողջունն ու օրհնությունը խաղաղության այդ վեհժողովին: Համաժողովին մասնակցում էին աշխարհի 144 տարրեր երկրների Հասարակական, գիտական, մշակութային, կանանց, երիտասարդական կազմակերպությունների 3200 պատգամավորներ և ավելի քան 1500 դիտորդներ, Հյուրեր, որոնք ներկայացուցելներ էին աշխարհի բարի կամքի անր միլիոնավոր մարդկանց, և իրենց ելույթներում արտահայտում էին երկրազուղի բոլոր խաղաղանք ուժերի անհանձնիրական իտհերն ու զգացումները, Հույսերն ու իդհուց և միահամուռ պահանջում էին խաղաղությունը րաբարությունը և խաղաղության և բովանդակ մարդկայինը: Ի դեպ, Համաժողովին իրենց պրժուս մասնակցությունն են բերել նաև քրիստոնյա եկեղեցիները՝ իրենց Հայրապետներով: Բացի Հայոց Վեհափառի պատվիրակությունից՝ Համաժողովին մասնակցում էր Սովետական Հայաստանը ներկայացող 10 Հնդուց բողկեցած մի պատվիրակություն է: Խաղաղանք ուժերի Համաշխարհային Համաժողովը պատմական նշանակալից իրադարձություն էր մարդկության զրան պայքարի մեղ՝ Հանուն խաղաղության կայացման:

Համաժողովի մասնակից Հոգևորականության Հանգրիվման մասնակ պղջունի ճառով Հանդես եկավ նաև Վազգեն Ա-ն՝ իր Հեղինակավոր ճայնն սանով Հայ եկեղեցու մասին և արտահայտելով նրա՝ «Հանուն աղայալում երբոր դարեր առապապ, բայց այսօր վերածնված Հայ ժողովրդի» խաղաղության տենչանքն ու խաղաղասիրական ձգտումները. «Թեև մեր աշխարհը տակավին Հեռու է սեական խաղաղության մի գոյալիմակից, սակայն մեր բոլոր՝ այստեղ Հավաքվածներ, Հավատում ենք անսասակ կերպով, թե Աստուծոն Հանելի է մեր նպատակը և մեր գործը: Մենք նույն չափով Հավատում ենք նաև, թե բոլոր ժողովուրդների լայն զանգվածները վճախանապես կամենում են ապրել ու աշխատել մի խաղաղ աշխարհի մեղ... Մեր երկրագուղի բոլոր ժողովուրդները Հնոզհետե թրիստանում են և իրենց կենսական, իրական շահերի լույսի տակ սեանում, թե իրենց կյանքի բարությունը, իրենց զավակների երջանկությունը Հնարավոր է ապահովել ոչ թե ազգամեջայն թշնամությաննեղով, ոչ թե պատերազմներով, այլ ժողովուրդների բարեկամությունը, պետությունների անտեսական, գիտական ու մշակութային գործակցությամբ...»: Տարրեր կրոնների ներկայացուցիչների կողմից տիրական շեշտով, միասնական կամքով և վճախանությունը Հնչեց խաղաղության ճայնը մարդասիրական վեհ իդեալների և Համաժողովայնի կերպարության Համար:

1975 թ. փետրվարի 24-28 Տ. Տ. Վազգեն Ա-ի Հրավերով Խաղաղության Համաքրիտոնեական կոնֆերանսի միջնազգային բարուուղարությունից էր հերթական նստաշրջանը գումարեց Էշմիսանում: Նստաշրջանի Հանդիսավոր բացմանը ներկա էր կաթողիկոսը, ով Հանդես եկավ ողջունի մի ուղերձով, իսկ նրա Հանձնարարությունը Շիրակի թեմի առաջնորդ ա. նարեկ կախկուտ Շարաբյանը՝ զեկուցումով: Ինչպես սեանում ենք, Վազգեն Ա-ի ջանքերով տեղում մեր եկեղեցին իր գործուն մասնակցություն է ունենում Խաղաղության Համաքրիտոնեական միջնազգային կոնֆերանսի աշխատանքներին:

Համաշխարհային պատմությանը Հայտնի է, որ միջնազգային լարմանության թուլացումը կարևոր չուրի սուրյիտիվ գործուներից և մասնակավոր մի մտալիմակի արդյունք չէ բեալ, այլ պատմական անրուսափելի մի անհրաժեշտություն: Այս տարակայսական պատճառները ստիպում են մարդկությանը գործազուրկ խաղաղ գոյակցության քաղաքականությունը երկրորդանդի և բազմակողմանի միջնազգային բանակցություններում:

1977 թ. Հունիսի 6-10-ի ընթացքում Մոսկվայի և Համայն Թուսիտ պատերաբը նորին Սրբություն Տ. Պեմենի նախաձեռնությամբ ու Հրավե-

¹ «Էրմիսան», 1973, ապրիլ, էջ 33.
² Լուսին տեղում, ճոյններ, էջ 3.

¹ Լուսին տեղում, էջ 5.

բով Մոսկվայում գումարեց կրոնական գործիչների Համաշխարհային կոնֆերանս՝ նվիրված կայուն խաղաղության, հոտաթափման և ժողովուրդների միջև արդար Հարաբերությունների հաստատման: Կոնֆերանսին մասնակցեցին քրիստոնեական, բուդդայական, հինդու, մահադական, հրեական, շինտայական և սեր կրոնների շուրջ 650 ներկայացուցիչներ աշխարհի 107 տարբեր երկրներից¹: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Հուսեյնական կաթոլիկ եկեղեցու, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի, Լյուսիերական Համաշխարհային ֆիդեղոսայի, Բուսոպուսների Համաշխարհային այխանի, Մուսուլմանական Համաշխարհային կենդրոնի, Խաղաղության բուդդայական ուստիան կոնֆերանսի, Համայն Աֆրիկայի եկեղեցիների կոնֆերանսի, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի և Համաշխարհային կրոնական բազմաթիվ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այս կոնֆերանսին Հայաստանյայց Առաքելական եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անձամբ ներկայացնում էր Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինն իր պատվիրակությամբ: Լիազույցար նստումը նա ֆերանսերենով Հանդես եկավ ազդեցիկ խոսքով ու կարևորեց Հեռեկայը. «Հայ ժողովուրդն ու Հայ եկեղեցին կոչ է անում կազմելու միասնական Հոգևոր Հզոր եկրայություն և աղբիւր ու գործելու ամբողջ ուժերով, սրբազնի երկրի վրա իրազորվել կամբ Աստուծո՝ «Յերկիր խաղաղության, ի մարդիկ Հանունի»»:

1978 թ. Խաղաղության պաշտպանության գործին մատուցած ծառայության և ծննդյան 70-ամյակի առիթով վեհաժողովը պարգևատրեց «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով: Երաշխանի Հանձնումբ տեղի է ունեցել երեսուներե սեպտեմբերի 27-ին, որին Հանրապետության վեհաժողովը շնորհակալական խոսքը²:

1979 թ. նոյեմբերի 26-28-ը Մայր Աթոռում գումարում է Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Մերձավոր Արևելքի Հատուկ Հանձնաժողովի նստաշրջանը³: Բառի սեր, որ Վազգեն Ա-ն Նազեկ և գալուստյանի և նստաշրջանի բացման խոսքով, նրա ջանքերով այս Համազումարը ևս մի նոր քայլ է Հանդիսանում Մերձավոր Արևելքում արդարության և խաղաղության պակասման Համար քրիստոնյաների մասնակցության գործում:

Ամենայն Հայոց Հայրապետի՝ միջկողմանի չափազանց խաղաղասիրական-մարդասիրական իմաստուն գործունեությունը բարձր է գնահատա-

վել ոչ միայն Հայ, այլև աշխարհի շատ ժողովուրդներին թե՛ աշխարհիկ, և թե՛ Հոգևոր պետերի և գործիչների կողմից: Անդադառնալով որպես գործունեության Մուսուլման Մարմնի պատրաստելու և Նրա Ամենայն Հայոց կաթողիկոս, Չեր պատանավարության ընթացքում Դուր ասացար միջազգային մեծ Հեղինակություն վայելող Հովվապետի անուն: Խաղաղության մարտ-բնիկներին առավելագույն շարքերում, խաղաղասիրական բոլոր ձևերակրիցին Չեր մասնակցությամբ, քրիստոնեական տարբեր եկեղեցիների մերձեցման և միավորման ի խնդիր Չեր գործունեությամբ, ինչպես նաև Հայ եկեղեցու շինության և բարեկամության մասին Չեր անադատ Հոգևորության և ջանքերով, աշխարհում ցրված ու բռնակցված վերաբերման Հայ կրոնական երդիկի տակ Հավանքում: Չեր անխնայ հեղինակ Վազգենի անբնական Հավատարմությունը⁴: Մի առիթով էլ երեսուցենի Հայոց պատրաստելու ա. եղիչն ասել է. «Մարդիկ կան, որտեղ, ինչպես բոված է, մասնակցին կպատկանին, և մարդիկ կան, որ նշարտության կպատկանին: ...Իրականին մեծ մարդը կպատկանին թե՛ իր ծանախին և թե՛ ճշմարտության: ...Մտի Հանդարտ խղճմանքով կրնանք բան, թե՛ Ն. Ս. Օձուրյան կրքով պատկանել թե՛ մասնակցին և թե՛ ճշմարտության, կրքով այս կայան և զԱստուծոյն Աստուծո, կրքով սեկի օգակ ըլլալ ի բնիկեցիին և ժողովուրդին միջև, իր Հայրենիքի և արտասանման ժողովուրդի միջև և իրազորեց այն, ինչ որ պերպույն բազման էր և ինչ որ ինչ բոլորի բազման էր»⁵:

Վեհաժողովը Հայրապետի՝ աշխարհային խաղաղության կայացման ու Հաստատման գործունեության Համառոտ պատմությունը կերտախուժ ենք Հայ Հայտնի մարքից մեկով. «Սաղաղության իրենցը մի ամբողջ կողմաբարտաբանություն է, մարդասիրական կարգը աղբիւր և գործելու մի աշխարհայացք՝ էսպես քրիստոնեական: Կարելի չէ խաղաղության իրենցը անջանել Գրիստոսի Ավետարանից: Եվ առանց խաղաղության, ճշմարտության և կենդանի գործի, զժպար թե կարողանայինք Գրիստոսի Հեռեկայը կոչվել: Գրիստոսի թշուրտնանքին ինքը խաղաղության մի առաքելություն է մարդասիրական աշխարհում: Ընդդիմապես պատերազմին նշանակում է Հոգևորական Աստուծո կամբն»⁶:

¹ «Երթմանի», 1974, Ե, էջ 14, (սակ՝ «Երթմանի», 1975, Ե, էջ 3:

² Սուպետրով, 1969, Ժ-ժու, էջ 70:

³ Սուպետրով, Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջին (կյանք ու գործունեություն), էջ 41:

⁴ Սուպետրով, 1977, Խ-ժու, էջ 24:

⁵ «Մասնակցություն», Վազգեն Առաջին կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 78:

⁶ «Երթմանի», 1979, դեկտեմբեր, էջ 8:

ԵԿԳԵՑՆԵԿ ԼՈՐԵՎՈՐԱԿԱՆԸՐ ԺԱՆԱԿԻ ՊԵՇԵՊԵՆ ԸՆՅ ժՈՂՈՐԴՊԵՆԸ ԸՆԿՈՒՄՆԵՏԻ ՈՒ ՊԵՇԵՊԵՆԻՆՆԵՐԻ ՍԵՋ

ԼՄԻՈՑ ՍԻՍՆԱԿԸ

Եկեղեցու և ժողովրդի անբախտելի համազորակցությունը և զրկի միաշնչանակ համաձայնությունը սոմարի Հարցերում ունի մեկ առաջնային Հիմք. ժողովուրդը ընդունում էր եկեղեցու եկղևակությանը սոմարի հարցում: Եկեղեցականներն էին ժամադրություն միայնաուրբների պահպանները, որոնք էին հաշվում սոմարը, և ժամանակին վերաբերող Հարցերում եկեղեցու Հեղինակությունն անվերապահ էր: Այս տեսակետից է պետք դիտել նաև «աննն», «պահ, ժամանակ» իմաստ ունեցող բառը, որիմակ՝ արևմտահայերենում «տանիմ, այն տանի» բառակապակցությունների մեջ, որը ոչ այլ ինչ էլ, քան ատենը: Բառի նախնական իմաստն է ժողովը, դատարանը, այսինքն՝ Հավաքը և Հավաքատեղին, որը Հետագայում սեղագիտվել է ժամանակի գրա՝:

Բարբառներում «պահ, ժամանակ» իմաստով գործածվում է նաև «զան» բառը (որինակ «աստղահաս», «անմիջապես, Հիմա»), որը կապված է նախադասյի սովորական իմաստի հետ և արտահայտում է Հույզ կնդ առասպելական այն պատկերացումը, որ երկնային ժարմիները, առաջին Հերթին՝ Արդյալը և Լուսինը, սովորապես են զուհեց զահ, և ժամերն ոչ այլ ինչ են, քան այդ զահ-դիրբերը: Այստեղից էլ «զահցո-զահ» ժամից ժամ, ժամանակ առ ժամանակ, ինչպես նաև օրվա տվյալ ժամից մինչև հաջորդ օրվա միևնույն ժամը ընկած Հատվածը, կլոր օր՝:

«Ժամ» և «եկեղեցի» բառերի նույնիսկությունը, ժամատացությունը, կամ ժամերգությունը, «ժամը կանգնել»՝ ծառայության սկզբի իմաստով, «ժամը դուրս գալ»՝ ծառայության ավարտի իմաստով, «ժամուսեր» եկեղեցատեր, «ժամուց», կամ «պաշտուունց»՝ Հոգեբանական արվել դուստր-գոհարներ, «ժամախոր», «ժամախոր»՝ ժամերգության ժամանակոց ժողովուրդ, «ժամաբար»՝ ժամերգությունը կամ պատարագը կատարող բա-

ձան – սա բառերի և բառակապակցությունների ոչ լրիվ այն ցանկն է, որն արտահայտում է ժամանակի կարգը եկեղեցու Հետ: Բրիտանական Հոգեբան Հիմնարկությանը և դրա արտադրությունները ժամանակի կատեգորիաներով արտահայտվել ևս մեկ անգամ շեշտում է Հոգեբանական-տար կապի խոր հիմքերը ժողովրդի գիտակցությունում:⁷

«Ժամ-պատարագ չունենալ»՝ արտահայտությունը էլ ավելի խոր իմաստ ունի, քանի որ բնորոշում է ոչ այնքան անհավատ կամ եկեղեցի չհամարող, որքան ժամանակի զգացողության չունեցող մարդուն: Ըստ Կ. Գաբրիելյանի, սակայն, սերտատացիների բարբառում նույն արտահայտությունը նշանակում էր եկեղեցու, Հավատի Հանդեսի սոմար վերաբերումը ունեցող: Ինչպես նշված երևույթները, այնպես էլ Հանդեսայինների կապված արտադրությունների «ժամահաց», «ժամ տնել»՝ Հասկացությունների կենսունակությունը՝ և մինչև մեր օրերը կիրառվել թույլ են ապին երբեմնային, որ եկեղեցու դերը ժամանակի հայգիտան և սոմարական գիտելիքների տարածման Հարցում անդրաշնչահասակ էր:

Հայ Առաքելական եկեղեցու ծիսական սոմարը լուսնաարեգական է, քանի որ կապված է մի կողմից արեգականին սոմարի, մյուս կողմից՝ լուսնային սոմարի հետ: Միասին տեսնույցը կապված է ինչպես Արեգյանի արեգատույտի չորս Հիմնական կետերը՝ արեգաբանը ու օրահավասարները, այնպես էլ Լուսնի լրումներն ու փուլերը՝ այլտեղ, շարաքիններ, Հուլիի առնելով: Բնելով Միլենրիթովյան մշակույթի սոմարի ընդհանուր դրուշումը կիրառվող մեկ մտղիկից, բրիտանական բուրբ ժամանակը ենթադրվում են Արեթնի պարբերաչափանի՝ և Լուսնի աների (կայանների)

⁷ «Ստան» և «զան» հասկացությունների իմաստափոխության վերաբերյալ տես՝ Գ. Անտրաքի, ԳՊԲ, հատ. Կ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971, «ստան» բառի տպ. էջ 286-287
⁸ Ս. Անատունի, «այդը ըստ ու ըստ», «նարարչական», 1912, էջ 124: Անատունի աստարակում է «պող գառի» կապակցության 24 մ. իմաստը, որը պարզապես է, քան որ իմնականում ժողովուրդական տոմարը օրը չի բաժանում 24 ժամերի:
⁹ «Ժամ» բառի հետ կապված ընդարձակ օրինակները տես՝ Ս. Անատունի, 6շվ, աշխ., էջ 225-226:

¹ Դեմ ժողովրդական մակակամ ռուսակալորը
 Աշտարակ, ճամբին ըստակ,
 Ըլ ժամ ունի, ոչ պատարագ:
 Ապում է աշտարակցիների անշտարակալորում շեշտելու համար (այսինքն է մայրու, ծագումով վանդի 78-ամյա Գ. Սալխասյան), մինչդեռ Աշտարակում, ինչպես հայտնի է, գործող եկեղեցիների աստարակում կապակցի չի կարող Անատունի:
